



ԳՈՐԾԱՐԱՐԻ ՉԱՅՆ

հունիս –2011

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ
ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



Անշարժ գույքի շուկան և վարկերի մատչելիությունը Հայաստանում

Հունիսի 29-ին «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնում տեղի ունեցավ «կլոր սեղան» քննարկում՝ նվիրված Հայաստանի անշարժ գույքի շուկայում փոքր բիզնեսին առնչվող խնդիրներին և բարեփոխումների հնարավորություններին:

Մինչ այդ, Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիայի (ՕՆՀԱ) կողմից իրականացվել էր ուսումնասիրություն՝ Հայաստանի անշարժ գույքի շուկայի և ՓՄՁ ոլորտի համար վարկերի մատչելիության վերաբերյալ: Քննարկման ընթացքում մասնակիցները ծանոթացան ուսումնասիրության արդյունքներին, հայտնեցին իրենց տեսակետները, մեկնաբանություններն ու առաջարկությունները: Քննարկմանը մասնակցում էին՝ «Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի (CIPE) ներկայացուցիչ Աննա Նադգրողկինիչը, «Բիզնես շահերի պաշտպանության ցանցի» անդամները, գործարարությանն աջակից ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների, Անշարժ գույքի գործակալությունների, առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների ներկայացուցիչներ:



«Անշարժ գույքի շուկան և վարկերի մատչելիությունը Հայաստանում»

Նոր որակ հարկային բարեփոխումներում. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային հանդիպում է ունեցել ՊԵԿ-ի ղեկավար անձնակազմի հետ

Հիմնական բեռը պետք է ընկնի խոշորների վրա

Հարցվածների 39%-ը պատրաստակամություն է հայտնել միանալու կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին

Փոքր բիզնեսը դառնում է քաղաքական գործոն

Հայաստանը կբարելավի իր դիրքը «Doing business»-ում

Ջերմոցային տնտեսությունները զարգացման մեծ պոտենցիալ ունեն

Արդյունաբերողների և գործարարների միությունը պաշտպանում է միայն խոշոր բիզնեսի շահերը

Բիզնեսը ոգևորված է կառավարության բարեփոխումներից. Հայաստանի գործատուների միության նախագահ

Կանայք պետք է բիզնեսով զբաղվեն. գործատուների միության նախագահ

Հայաստանի վարչապետ. Անհրաժեշտ է ստեղծել քաղաքացիական հասարակություն

Կատեղծվի աշխատանքային խումբ՝ ԲՏՁՄ եւ Գյուղատնտեսության նախարարության միջև

Պատգամավորներն առաջարկում են փոխել ստուգումների մասին օրենքը



Հարկային և մաքսային բարեփոխումները բերել նոր որակի և նոր աստիճանի. այս հիմնահարցն է եղել Պետական եկամուտների կոմիտեում ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի հրավիրած աշխատանքային հանդիպման առանցքում: Մերժ Սարգսյանն ընդգծել է, որ նպատակադրումը շատ հստակ է՝ պետք է առաջին հերթին փոխել հարկային և մաքսային մարմինների ընկալումը հասարակության և գործարար համայնքի կողմից՝ հարկ հավաքագրող կերպարից այն վերածելով հարկ վճարողներին սպասարկման ժամանակակից ծառայություններ մատուցող և վերահսկողություն իրականացնող մարմնի, այլ կերպ ասած՝ բիզնեսի համար հարկայինը պետք է լինի ոչ թե հարկեր հավաքող, այլ նրա հարկերը ֆիքսող մարմին:

Ըստ հանրապետության նախագահի՝ Ազգային անվտանգության խորհրդի նիստում հարկային և մաքսային համակարգերի բարեփոխումների ծրագիրն առաջիկա երեք տարիների համար ընդունելուց հետո հանձնարարվել էր, որպեսզի Պետական եկամուտների կոմիտեն գործողությունների մանրակրկիտ ծրագիր և ժամանակացույց մշակեր. «Քանի դեռ այդ ծրագիրը չի ամփոփվել, ես առաջարկում եմ դիտարկել դրա հիմնական ուղղությունները, դրանց իրականացման առկա հնարավորությունները և պահանջվող ռեսուրսները: Ե՛վ Ազգային անվտանգության խորհրդի նիստում, և՛, ընդհանրապես, վերջին ժամանակներս մեզ մոտ շատ կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել, և մենք համարում ենք, որ նաև այս ոլորտում մենք պետք է կարողանանք լուրջ ներդրումներ կատարել, որպեսզի ակնկալիքներն էլ լուրջ լինեն», - ասել է Մերժ Սարգսյանը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են բյուջետային մուտքերի ապահովման ընթացքն ու հնարավոր զարգացումները, որպեսզի հնարավոր լինի հասկանալ փոփոխությունների ընթացքի ազդեցությունը եկամուտների կատարողականի վրա. «Ձեր առջև իսկապես բավականին դժվար խնդիր է դրված. դուք ոչ միայն պետք է կարողանաք արագ բարեփոխումների շնորհիվ հնարավորինս թեթևացնել վարչարարության բեռը մեր գործարարների համար, բիզնեսի համար, այլև այդ ընթացքում պետք է կարողանաք ապահովել պատշաճ հարկահավաքություն: Ավելին ասեմ, մենք պիտի կարողանանք տարեցտարի ավելացնել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը՝ հարկման դաշտ բերելով ավելի ու ավելի շատ հատվածներ ստվերից»: Հանրապետության նախագահի խոսքով՝ համակարգը պետք է կարողանա, անընդհատ ավելացնելով հարկերի հավաքելիության աստիճանը, միաժամանակ դառնալ ավելի ու ավելի ընդունելի, ընկալելի, արդար և հնարավորինս բարյացակամ՝ տնտեսվարող սուբյեկտների համար. «Իրոք, շատ դժվար խնդիր է, բայց, համոզված եմ, իրականանալի: Դա անելու համար ես ինքս եմ պատրաստ անձամբ աջակցել ձեր ջանքերին, և, ինչպես գիտեք, մեր վերջին համատեղ հանդիպումները տնտեսվարող խոշոր սուբյեկտների հետ հենց այդ նպատակն ունենին: Մենք ցանկանում ենք ստեղծել համագործակցության նոր մթնոլորտ, և, իհարկե, նաև հանդիպումները շարունակելու ենք»:

Նախագահը շեշտել է, որ, ի վերջո, պետք է փոխվի վերաբերմունքը հարկային և մաքսային աշխատողների նկատմամբ. «Մա մեզ համար գերխնդիր է, և այս խնդիրը մենք պետք է կարողանանք լուծել: Միևնույն ժամանակ մենք պետք է փոխենք ՊԵԿ-ին ներկայացվող պահանջները: Մա էլ է միանշանակ: Մեր նպատակադրումը շատ հստակ է. մենք պետք է առաջին հերթին փոխենք հարկային և մաքսային մարմինների ընկալումը հասարակության և գործարար համայնքի կողմից՝ հարկ հավաքագրող մարմնի կերպարից այն վերածելով հարկ վճարողների սպասարկման՝ ժամանակակից ծառայություններ մատուցող և վերահսկողություն իրականացնող մարմնի: Մա անելու համար ոչ միայն պետք է կարողանանք վերափոխել ձեր գերատեսչության գործունեության տրամաբանությունը, այլև տնտեսվարողների վարքագիծն ու մոտիվացիան: Դա անելու ենք համագործակցային, երկխոսության մթնոլորտում, պարզ, թափանցիկ և արդյունավետ համակարգ ապահովելով, սպասարկման որակը բարձրացնելով, աշխատանքի նոր պայմաններ առաջարկելով»: Ըստ Մերժ Սարգսյանի՝ միաժամանակ նաև հաստատակամ պետք է լինել ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված միջոցառումներում և, ամենակարևորը, բոլոր տնտեսվարողների հանդեպ հավասար մոտեցումների և արդարության ապահովման հարցերում. «Մա երևի թե ամենակարևոր խնդիրն է, որ մենք ձեզ հետ միասին պետք է կարողանանք լուծել: Ե՛վ ծրագիրը, որ հաստատել ենք Անվտանգության խորհրդում, հենց այս խնդիրների լուծումն է ենթադրում»:

Կարևորելով հանրապետության ղեկավարի այցը Կոմիտե՝ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանը տեղեկացրել է, որ հարկային-մաքսային մարմիններում բավականին շատ աշխատանք է կատարվել, սակայն նախագահի կողմից որակական նոր խնդիրներ են դրվել, որպեսզի հնարավոր լինի արդեն իսկ իրականացվող բարեփոխումներն ավելի բարձր մակարդակի հասցնել. «Իհարկե նաև ֆինանսական լուրջ խնդիրներ ունենք, որոնք պետք է ապահովեն այդ ռեֆորմների իրականացումը, սակայն ներկայումս բանակցություններ են վարվում դոնոր կազմակերպությունների հետ, որպեսզի այդ միջոցները գտնվեն»: Գագիկ Խաչատրյանի խոսքով՝ բարեփոխման լայնածավալ աշխատանքներ կիրականացվեն ինչպես մաքսակետերում, այնպես էլ տարածքային հարկային տեսչություններում և բիզնեսի համար ծառայությունների բարձր որակ կապահովվեն: Սահմանային կետերի համար շուտով նախագծային աշխատանքներ կտարվեն դոնոր կազմակերպությունների մրցույթում շահած լատվիական կազմակերպության կողմից: Շուտով մրցույթ կհայտարարվի նաև շինարարական աշխատանքների համար:

Անդրադառնալով ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի 4-րդ համագումարում ՀՀ նախագահի կողմից բարձրացված՝ հարկերից խուսափող տնտեսվարողների խնդրին՝ ՊԵԿ նախագահը նշել է, որ այդ հարցը նույնպես քննարկվել է խորհրդակցության ընթացքում. «Մենք ներկայումս աշխատանքները կազմակերպում ենք ռիսկային չափանիշների հիման վրա և նախորդ ժամանակների տարբայնորեն, չմտածված ստուգումներին վերջ ենք տալիս: Այո, սահմանից մինչև իրացման շղթա մենք ունենք ռեզերվներ և այդ ուղղությամբ աշխատանքներ ենք տանում»:

Ինչ վերաբերում է հավաքագրված հարկերին, ապա դրանք վկայում են այն մասին, որ հարկային մուտքերն ավելանում են. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, միայն շահութահարկի գծով, հավաքագրումներն ավելացել են 18 մլրդ դրամով: Խոսելով հարկային մուտքերի մեջ խոշոր հարկատուների մեծ տեսակարար կշռի մասին՝ Գագիկ Խաչատրյանը տեղեկացրել է, որ այսօր Հայաստանում գրանցված է 82 500 ձեռնարկություն, որոնցից 440-ը խոշորներն են: ՊԵԿ նախագահի հավաստմամբ՝ հենց այս 440 ձեռնարկությունների միջոցով է ապահովվում հարկային մուտքերի 60 տոկոսը, ինչը փաստում է, որ թեթևացել է փոքր և միջին բիզնեսի հարկային բեռը:

Գագիկ Խաչատրյանը հայտնել է նաև, որ այսօր արդեն տնտեսվարողները հիմնականում էլեկտրոնային եղանակով և եռամսյակը մեկ են հաշվետվություն ներկայացնում հարկային մարմիններին. «Մենք շատ հաճախ չենք տիրապետում, թե ինչ հարկային մուտքեր կարելի է ակնկալել: Ե՛վ անգամ գիտակցելով դա՝ գնացել ենք այդ քայլին և 57 փաստաթուղթ հանել շրջանառությունից»: Կոմիտեի ղեկավարը փաստել է, որ բարձրակարգ սպասարկումն այսօր հարկային մարմինների առաջնային գործառնություններից է. Խոշոր հարկ վճարողների, Արաբկիրի, Կենտրոնի և Մյասիկյանի հարկային տեսչություններում արդեն գործում են հարկ վճարողների սպասարկման ժամանակակից սրահներ, իսկ բոլոր 37 տարածքային տեսչություններում գործարկվել են էլեկտրոնային տեղմիջանակները, որոնց միջոցով հնարավոր է էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ և հաշվարկներ ներկայացնել հարկային մարմին: Նախատեսվում է մինչև տարեվերջ Երևանի և մարզերի բոլոր հարկային տեսչությունների գործելաձևը բերել նույն ձևաչափի՝ ներդնել

սպասարկման որակի և շենքային պայմանների նույն չափանիշները: Տարեսկզբից մեկնարկած այս և մյուս նպատակային աշխատանքները հնարավորություն են ընձեռել 2011թ. առաջին 4 ամիսների ընթացքում ապահովել պետությունի մուտքերի մասով ծրագրային ցուցանիշներն ու հավաքագրել շուրջ 240.4 մլրդ դրամի չափով հարկային մուտքեր՝ այդ թվում 40.2 մլրդ դրամի սոցիալական վճար: Նախորդ տարվա համեմատ՝ հավաքագրված եկամուտների աճը 10.2% է կամ 22.3 մլրդ դրամ, այդ թվում՝ սոցիալական վճարի մասով՝ 34% կամ 4.4 մլրդ դրամ:

Ըստ Գազիկ Խաչատրյանի՝ հարկային և մաքսային համակարգի բարեփոխումների գլխավոր նպատակը մեկն է՝ երկու համակարգերի գործունեությունն առավել արդիական, թափանցիկ և արդյունավետ դարձնել:

30.05.2011
Taxservice.am

Հիմնական բեռը պետք է ընկնի խոշորների վրա

Գործարարների հետ հանդիպումներից հետո երեկ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային խորհրդակցություն ունեցավ նաև հարկահավաքների հետ: Ավելի քան երկու ժամ տևած քննարկումներից հետո պետեկամուտների կոմիտեի նախագահ Գազիկ Խաչատրյանը պատասխանեց լրագրողների հարցերին:

-Նախ՝ ուզում եմ նշել, որ հանրապետության նախագահի այցը մեր համակարգի համար շատ կարևոր էր: Նպատակն այն էր, թե ինչպես անել, որ հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումները հասցվեն նոր աստիճանի: Համակարգում բավական շատ աշխատանք կատարված է: Դրանք, ինչպես նաև հետագա զարգացման ուղղությունները, քննարկվեցին երեկ տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

Հանրապետության նախագահի կողմից դրվեցին որակական նոր պահանջներ, որպեսզի կարողանանք բարեփոխումները հասցնել ավելի բարձր մակարդակի: Դրանք, իհարկե, ունեն նաև լուրջ ֆինանսական խնդիրներ: Այն բոլոր դրույթները, որոնք ֆինանսական հոսքեր չեն պահանջում, կկատարվեն: Մյուս կողմից՝ ներկայումս բանակցություններ են վարվում դոնոր կազմակերպությունների հետ՝ ֆինանսավորման հարցերը լուծելու վերաբերյալ:

-Ինչի՞ համար են անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

-Դրանք անհրաժեշտ են տեխնիկական հագեցվածության, էլեկտրոնային կառավարման համակարգն ավելի բարձր մակարդակի հասցնելու համար: Միջոցներ են պետք սահմանային մաքսակետերի, ինչպես նաև այլ հզորությունների կատարելագործման նպատակով:
-Կա՞ն տվյալներ, թե որքա՞ն գումար պետք կլինի սահմանային անցակետերի համար:

-Բոլոր գնահատականները կատարված են միջազգային կառույցների կողմից: Եվրոպական միության փորձագետներն են աշխատում: Սահմանային կետերի համար մրցույթը շահել է լատվիական կազմակերպությունը, որը կատարում է նախագծա-նախահաշվային աշխատանքները: Դրանք ներկայացնելուց հետո կհայտարարվի մրցույթ շինարարության իրականացման համար, և կսկսվի երեք մաքսակետերի կառուցումը:

-Նախօրեին նախագահը խոսեց հարկերից խուսափող, հատկապես խոշոր գործարարների մասին: Կարո՞ղ եք մի քանի անուն նշել:
-Ներկայումս աշխատանքները կազմակերպում ենք ռիսկային չափանիշների հիման վրա: Նախորդ ժամանակաշրջանի տարբերայնորեն, չմտածված ստուգումներին վերջ ենք տալիս: Ռիսկեր ունենք գրեթե բոլոր ոլորտներում: Ռիսկերի չափանիշները մեզ թելադրում են, թե ինչ ուղղությամբ պետք է տանենք մեր հետագա քայլերը: Այո, ներկրման սահմանից մինչև իրացման շրջա մեզերվներ ունենք եւ այդ ուղղությամբ աշխատանքներ ենք իրականացնում: Անունները կլսեք հետագայում, երբ մեր համապատասխան գործողությունների արդյունքում լրացուցիչ գումարներ կբերենք: Ասեմ, որ այս տարի միայն շահութահարկի գծով 11 մլրդ դրամով ավել հարկ ենք հավաքել:
-Հարկերի 60 տոկոսն ապահովում են խոշոր հարկատուները: Դա վտանգավոր չէ՞ տնտեսության համար:
-Ճիշտ հակառակը: Ընդհանուր առմամբ երկրում ունենք 82,5 հազար գործող ձեռնարկություն: Դրանցից 440-ը ընդհանուր հարկային մուտքերի մեջ ապահովում է 60 տոկոսը: Դա շատ լավ ցուցանիշ է: Խոշոր հարկ վճարողների շրջանում որքան բարձրացնենք հարկման ցուցանիշը, այնքան կթեթևանա փոքր եւ միջին բիզնեսի բեռը:

-Ունե՞ք անհանգստություններ՝ կապված բարեփոխումների հետ:

-Իհարկե, ունենք: Շատ հարցերում գնացել ենք մտածված ռիսկի: Բարեփոխումների այս փուլում ներդրել ենք էլեկտրոնային համակարգ, նվազեցրել ենք բիզնեսի հետ շփումները: Հարկային տեսչությունը եւ բիզնես միջավայրը տարանջատել ենք: Բիզնեսի համար ստեղծել ենք լավագույն, մեզ համար, առաջիկա փուլում, դժվար պայմաններ: Հին գործիքները, որոնք հարկային-մաքսային տեսչներն ունեին, ներկայումս չեն գործում:

Դրանից բացի՝ հաշվետվական համակարգը դարձրել ենք եռամսյակային: Բիզնեսը էլեկտրոնային տարբերակով եռամսյակային հաշվետվություններ է ներկայացնում, եւ մենք շատ հաճախ չենք տիրապետում, թե ինչպիսի հարկային մուտքեր կարելի է ակնկալել: Այս առումով, դժվար չէ պատկերացնել, թե ինչ բարդ վիճակի մեջ ենք: Գիտակցելով դա, այնուհանդերձ գնացել ենք այդ քայլին:

Շրջանառությունից հանել ենք 57 փաստաթուղթ: Նախկինում եթե շահութահարկի կանխավճարային մուծումները կատարվում էին տարեկան 12, ապա այժմ՝ 4 անգամ: Միայն այդ գծով մոտ 5 մլրդ դրամի կորուստ ունենք: Ընդհանուր բարեփոխումների ծրագրով 16 միլիարդի ռիսկ ենք տեսնում: Բայց կարծում եմ, որ անպայման պետք է գնանք դրան: Ինչքան շուտ կատարենք բարեփոխումները, այնքան արդյունքը մեծ կլինի: Ակնկալում ենք, որ նոր գործիքների կիրառման շնորհիվ հետագայում ավելի շատ հարկեր կբերենք: Վասակ Թարփոշյան

28.05.2011
www.armworld.am

Այսօր ԱՄՆ ՄՁԳ կենսաթոշակային և աշխատաշուկայի բարեփոխումների ծրագիրը (ԿԱԲՕ) «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» խորհրդատվական ընկերության հետ համատեղ ներկայացրեց Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության իրազեկվածության ելակետային հետազոտության արդյունքները: «Միջոցառումներ կերպարվեն էին ՀՀ կառավարության, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայաստանում գործող բաշխողական կենսաթոշակային համակարգը ֆինանսապես անկայուն է, որտեղ բացակայում է հիմնավոր կապը համակարգին կատարած վճարումների և ապագա կենսաթոշակային եկամտի միջև: Սա լուրջ հակախթան է գործող համակարգին քաղաքացիների միանալու համար: Այս խնդրի լուծման նպատակով Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ է եղել կենսաթոշակային համակարգի բարեփոխմանը՝ ներդնելով կամավոր և պարտադիր կուտակային բաղադրիչները, որպեսզի համակարգը դառնա ֆինանսապես կայուն և ապահովի եկամտունեի համապատասխան մակարդակ՝ կենսաթոշակի անցնելիս: Բարեփոխման գործընթացը պահանջում է շարքային քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների մտածելակերպի, վերաբերմունքի և վարքագծի արմատական փոփոխություններ, որին ՀՀ կառավարությունը նախատեսում է հասնել հանրային իրազեկման և կրթության քարոզարշավի միջոցով:

ՀՀ կառավարության ջանքերին աջակցելու նպատակով ԱՄՆ ՄՁԳ ԿԱԲՕ-ն պայմանագիր է կնքել «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» խորհրդատվական ընկերության հետ, որը մշակել է ՀՀ 16 և բարձր տարիքի գյուղաբնակ և քաղաքաբնակ 992 քաղաքացիների շրջանում անց է կացրել հետազոտություն: Վերջինս քաղաքականություն մշակողներին թույլ կտա առավել արդյունավետ և հասցեական կազմակերպել հանրային իրազեկման քարոզարշավը, միաժամանակ բարձրացնելով հասարակության ֆինանսական գրագիտության մակարդակը:

Հետազոտությունը պատասխանում է այնպիսի առանցքային հարցերի, ինչպիսիք են՝ կենսաթոշակային ներկա համակարգի և առաջիկա բարեփոխումների վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը և վերաբերմունքը, կենսաթոշակների վերաբերյալ մտահոգությունն ու հարցվածների տեղեկատվության ստացման աղբյուրները: Հետազոտության, հարցվածների միայն 46%-ն էր ծանոթ գործող կենսաթոշակային համակարգին և նրանցից ընդամենը 27%-ը գիտեր, որ գործող համակարգը բաշխողական է: Հարցվածների ընդամենը 0.9%-ը գիտեր գործատուի և աշխատողների կողմից կատարվող սոցիալական ֆոնդի մասին: Հարցվածների 36%-ը լսել էր կենսաթոշակային բարեփոխումների մասին, իսկ 39%-ը պատրաստակամություն էր հայտնել միանալու կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին: Որպես տեղեկատվության նախընտրելի աղբյուր՝ հեռուստատեսությունը ստացել էր ձայների մեծամասնությունը (90%-ից քիչ ավել), որին հաջորդում էին թերթերն ու ամսագրերը (19-21%), և վերջում՝ հարազատներն ու ծանոթները (հարցվածների 14-19%-ը):

20.06.2011
Panorama.am

Փոքր բիզնեսը դառնում է քաղաքական գործոն

Թվում է կասկածներ այլևս չկան՝ կառավարությունը լրջորեն է մտածում փոքր եւ միջին բիզնեսի զարգացման մասին: Վերջին ակորդը, թերեւս, վարչապետ Տիգրան Սարգսյանի Վիեննայում ունեցած ելույթի այն մասն էր, որտեղ նա քաղաքացիական հասարակության կայացումն ուղղակի կապեց փոքր ու միջին բիզնեսի զարգացման հետ: Սա բավական հետաքրքիր հանգամանք է. ընտրություններից 1 տարի առաջ փոքր բիզնեսը կարևորվում է նաև որպես քաղաքական գործոն: Այնուամենայնիվ, որքանո՞վ են կառավարության քայլերը համահունչ նպատակներին: Հանուն արդարության՝ ՓՄՁ-ի համար իրոք կատարվել են լուրջ քայլեր: Այսպես, ավելացված արժեքի հարկից ազատվել են մինչև 70 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները: Սա գործնականում ՓՄՁ-ի համար հարկային օազիս է ստեղծել:

Մեր հարցումները ցույց տվեցին, որ գործարարների մոտ այս քայլը խիստ դրական է գնահատվում, համենայնդեպս՝ չկա մեկը, որ դժգոհի բարձր հարկերից, ինչպես 1-2 տարի առաջ: Սակայն նշենք, որ փոքր բիզնեսը աշխարհի բոլոր երկրներում էլ լուրջ հարկային արտոնություններից է օգտվում, ուստի կարելի է ասել՝ մենք միայն ստարտապիս պայմաններն ենք հավասարեցնում: Այսպես, թե այնպես՝ ՓՄՁ-ի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հասել է մոտ 45 տոկոսի, ու ամենայն հավանականությամբ՝ առաջիկայում ավելի կբարձրանա:

Սակայն 2 խնդիր, այնուամենայնիվ, բավական լուրջ է ՓՄՁ-ի համար: Առաջինը՝ վարկերի անմատչելիություն է: Մեր բանկային համակարգն իրոք կայացած է, ու վարկային տոկոսադրույքներն էլ նվազման միտում ունեն: Սակայն Հայաստանի բանկային համակարգն ունի մի արտասովոր թերություն՝ այն գործնականում չի ֆինանսավորում սկսնակ ձեռնարկատիրությունը (start-up): Քսաներկու բանկերից ոչ մեկն էլ սկսնակներին վարկ չի տրամադրում, անկախ նրանից՝ բիզնես-ծրագիր կա՞, թե՞ ոչ, շուկան խոստումնալի՞ց է, թե՞ ոչ: Դժվար է ասել, թե քանի փայլուն մտահղացում է նման կերպ կորչել:

Հաջորդ կարևոր հանգամանքը ներդրումային ծրագրերի հարկումն է: Հայտնի է, որ 300 մլն դրամից ավելի ներդրումային ապրանքներ ներկրելու դեպքում գործարարն ազատվում է ավելացված արժեքի հարկից: Այսինքն՝ սա մի արտոնություն է, որ գործում է բացառապես խոշոր բիզնեսի համար: Բայց չէ՞ որ փոքր եւ միջին բիզնեսը նույնպես ներդրումային ծրագրեր ունի, այդ դեպքում ինչո՞ւ պետք է արտոնությունից չօգտվի: Հասկանալի չէ, թե ինչո՞ւ խոշոր բիզնեսը պետք է ներդրումային դաշտում մրցակցային առավելություն ստանա փոքր բիզնեսի նկատմամբ: Մեր տեղեկություններով՝ կառավարության ներսում շրջանառվում է համապատասխան փաստաթուղթ, որով առաջարկվում է փոքր բիզնեսին նույնպես ներդրումային արտոնություն տրամադրել, սակայն ինչ-ինչ պատճառներով դրա քննարկումը ձգձգվում է:

Սամվել Ավագյան

13.06.2011
News.am

Հայաստանը կբարելավի իր դիրքը Doing business-ում

Հայաստանը Doing business-2012-ում իր դիրքը կբարելավի 5-6 կետով: Այդ մասին NEWS.am-ին ասաց Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը:

Նրա խոսքով՝ այն բարեփոխումները, որ իրականացվել են իրականացվում են, էական բարելավել են բիզնես միջավայրը, եւ կարտացոլվեն Հայաստանի միջազգային վարկանիշերում:

Մասնավորապես՝ հարկային հաշվետվությունների կրճատումը, լիցենզիաների թվի կրճատումը, հարկային հաշվետվությունների եւ վճարումների պարբերականության նվազումը, բիզնեսի գրանցումների պարզեցումը դրական կանդիդատնան Doing business-ում Հայաստանի վարկանիշի վրա:

Տ. Դավթյանի տեղեկացմամբ՝ ներկայում բարեփոխումների երկրորդ փաթեթն է մշակվել՝ ավելի խորը բարեփոխումների ծրագրով:

Մակայն, ըստ նախարարի, Doing business-ը մի փոքր ուշացումով է հրապարակվում եւ արտահայտում է ոչ թե տվյալ պահի, այլ նախորդ տարվա իրավիճակը: «Ցավոք սրտի, այն ինչ անում ենք՝ նոր հաշվետվության մեջ չի արտահայտվի: Մակայն այն, ինչ արել ենք՝ մեզ իրական առաջընթաց կապահովի, առնվազն 5 կետի շրջանակներում»,- ասաց Տ. Դավթյանը: Մակայն, նրա կարծիքով, Հայաստանի դիրքը մեծ չափով կախված է մեր մրցակից պետությունների գործողություններից: «Այս տարածաշրջանում շատ լավ մրցակցություն կա: Բացարձակ առումով միանշանակ մեր ցուցանիշները կբարելավենք, իմ կարծիքով՝ մենք ավելի շատ ենք անում, քան տարածաշրջանի եւ աշխարհի մյուս պետությունները»,- ասաց Հայաստանի էկոնոմիկայի նախարարը:

Որպեսզի այլ երկրներից հետ չմնանք, ըստ Տ. Դավթյանի, բարեփոխումներն ավելի արագ պետք է կատարենք, քան՝ մյուսները:

Հիշեցնենք, որ Doing business 2011-ում Հայաստանը զբաղեցնում է 48-րդ տեղը:

10.06.2011
News.am

Ջերմոցային տնտեսությունները զարգացման մեծ պոտենցիալ ունեն

Հայաստանի ջերմոցային տնտեսությունները ձմեռային սեզոնին կարող են ապահովել ներքին շուկայում բանջարեղենի նկատմամբ պահանջարկի 95 տոկոսը, ներկայիս 45 տոկոսի համեմատ: Այդ մասին այսօր՝ հունիսի 9-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հայաստանի ջերմատնային ասոցիացիայի տնօրեն Պողոս Գեւորգյանը: Նրա խոսքով՝ Հայաստանի բնակլիմայական պայմանները բարենպաստ են ջերմատնային տնտեսությունների զարգացման համար, հատկապես լեռնային շրջաններում:

Ներկայում Հայաստանում գործում են մոտ 120 հա ջերմատներ, թեև Խորհրդային միության տարիներին նախատեսված էր Հայաստանում ստեղծել մոտ 1000 հա ջերմատուն:

18.03.2011
News.am

Արդյունաբերողների եւ գործարարների միությունը պաշտպանում է միայն խոշոր բիզնեսի շահերը

Արդեն 2 ամիս է՝ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության գործադիր տնօրենի պաշտոնը թողել է Գագիկ Մակարյանը: Հիշեցնենք, որ այդ հասարակական կազմակերպության նախագահը հայտնի գործարար Արսեն Ղազարյանն է:

NEWS.am-ի հարցին, թե ինչն էլ է պայմանավորված բավական հայտնի կազմակերպությունից հեռանալը, Գ. Մակարյանն ասաց հետևյալը. «Արդյունաբերողների միությունում իմ աշխատանքը այնքան էլ լրիվ չէր գնահատվում կամ ընկալվում: Ես միշտ փորձում էի բավականին խնդիրներ ներկայացնել, բայց այդ օգուտը ստանում էր մի փոքր խումբ, իսկ դա ինձ համար հակահարկ չէր: Նախընտրեցի թողնել, քանի որ այնտեղ հիմնականում խոշոր բիզնեսն է արտահայտված»:

Նշենք, որ հունիսի 4-ին Գ. Մակարյանն ընտրվել է գործարարների շահերը ներկայացնող մեկ այլ կազմակերպության՝ Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ (նախկին նախագահը Արսեն Ղազարյանն էր): Ի տարբերություն արդյունաբերողների միության՝ գործատուների հանրապետական միությունը հ/կ չէ, այն շահույթ չհետապնդող եւ ինքնաֆինանսավորվող կազմակերպություն է: Հասկանալի է, որ այս երկրորդ միության նախագահի պաշտոնում Արսեն Ղազարյանի լիազորությունների ժամկետը լրացել էր 7 ամիս առաջ, բայց նա համագումար չի հրավիրել՝ նոր ղեկավար կազմ ընտրելու նպատակով: Միայն տարածքային մարմինների պահանջով հունիսի 4-ին հրավիրվել է արտահերթ համագումար, որտեղ էլ նախագահ է ընտրվել Գ. Մակարյանը:

09.06.2011
News.am

Բիզնեսը ոգևորված է կառավարության բարեփոխումներից. Հայաստանի գործատուների միության նախագահ

Վերջին ամիսների ընթացքում կառավարությունը բարեփոխումներ է անում իսկապես բարձր դոզայով: NEWS.am-ի հետ զրույցում նման հայտարարություն անելով՝ Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանն ավելացրեց, որ բիզնեսը ոգևորված է դրանով: Մասնավորապես՝ բարձր է գնահատվում հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի օպերատիվ միջամտությունը տնտեսական գործընթացներին, ինչը զսպում եւ ուղղորդում է պետական մարմիններին: Հավանաբար դրա արդյունքում էլ, ըստ Գ. Մակարյանի, պետական գերատեսչությունների հետ ստեղծվել է համագործակցության դրական մթնոլորտ:

Մասնավորապես՝ էկոնոմիկայի, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, գյուղատնտեսության եւ այլ նախարարություններ բաց են համագործակցության համար, լրջորեն քննարկում են գործատուների միության բոլոր առաջարկները: Գ. Մակարյանը դրական փոփոխություններ է տեսնում նաեւ պետեկամուտների կոմիտեի աշխատանքներում: Գ. Մակարյանի կարծիքով՝ կառավարության բարեփոխումներն իրենց դրական արդյունքները անպայման զգացնել կտան տարեվերջում:

09.06.2011
News.am

Հայաստանում հարկավոր է զարգացնել կանանց ձեռնարկատիրությունը: Այդ մասին NEWS.am-ի հետ զրույցում ասաց Հայաստանի գործատուների հանրապետական միության նորընտիր նախագահ Գագիկ Մակարյանը: Նրա կարծիքով՝ կանայք շատ ավելի կրթված են, սակայն սոցիալական սանդղակում տղամարդկանց համեմատ շատ ավելի ցածր դիրք ունեն: Բացի այդ՝ տղամարդիկ դիմում են միգրացիայի, ու կանայք դառնում են ընտանիքի միակ կերակրող:

Այդ պատճառով գործատուների միությունը ներկայումս մշակում է ծրագիր՝ կանանց ներգրավվածությունը բիզնեսում խթանելու նպատակով:

«Հայկական բիզնեսում կանայք քիչ են: 5-6 հազ. կին մենեջերներ կան, բայց 130-ից չի անցնում այն կանանց թիվը, որոնք ձեռնարկություն են հիմնադրել», - ասաց Գ. Մակարյանը:

09.06.2011
news.am

Հայաստանի վարչապետ. Անհրաժեշտ է ստեղծել քաղաքացիական հասարակություն

Տրանսնացիոնալ կորպորացիաների համար ոչ այնքան վտանգավոր են կոռուպցիան եւ ներդրումային միջավայրը, որքան պետության ապագայի քաղաքական կանխատեսելիությունը: Այս մասին հունիսի 8-ին հայտարարել է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ ելույթ ունենալով Վիեննայում կայացած Համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում «Հայացք դեպի Ռուսաստան» խորագրով նիստի ժամանակ:

Նրա խոսքով, ներդրումային միջավայրն առաջին հերթին անհրաժեշտ է մեր տնտեսվարող սուբյեկտներին եւ միջին ու մանր բիզնեսին:

«Որովհետեւ առանց փոքր ու միջին գործարարության զարգացման չի կարող լինել միջին խավ, իսկ առանց վերջինիս զարգացման՝ քաղաքացիական հասարակություն: Անհրաժեշտ է ստեղծել քաղաքացիական հասարակություն: Եվ ստացվում է, որ քաղաքացիական հասարակության ստեղծման ճանապարհին հենց փոքր ու միջին բիզնեսի զարգացման խթանմամբ է հնարավոր հասնել նրան, որ կոռուպցիայի դեմ պայքարի ներուժ լինի», - նշել է ՀՀ վարչապետը:

Վարչապետ Սարգսյանի դիտարկմամբ՝ կոռուպցիայի դեմ առաջին դեղամիջոցը կառուցվածքային բարեփոխումներն են: Անհրաժեշտ է, որ իշխանության մոտ լինի կոռուպցիայի դեմ պայքարելու քաղաքական կամք: «Որտեղից է առաջանում այդ քաղաքական կամքը: Վերջինս ի հայտ է գալիս, երբ համոզմունք կա այն ծրագրերի ճշմարտության մեջ, որոնք իրականացնում են: Եթե իշխանության գլուխ կանգնածների մոտ կա այդ համոզմունքը, որ դա լավ է երկրի, ժողովրդի ապագայի համար, ապա իշխանություններն իրականացնում են այդ բարեփոխումները, - ասել է Տիգրան Սարգսյանը:

ՀՀ կառավարության ղեկավարի խոսքով՝ շատ գործընթացներ, որոնք ընթանում են Ռուսաստանում, ազդում են Հայաստանում ընթացող գործընթացների վրա: Սա պայմանավորված է նրանով, որ երկու երկրներն աշխատում են միասնական տնտեսական տարածությունում, նրանց մենթալիտետները, մշակութաբանական միջավայրը միմյանց շատ նման են:

09.06.2011
news.am

Կատեղծվի աշխատանքային խումբ՝ ԻՏՁՄ եւ Գյուղատնտեսության նախարարության միջև

Նորարարական լուծումները կտրուկ բարձրացնում են ցանկացած ոլորտի արտադրողականությունն ու աշխատանքի արդյունավետությունը, այդ իսկ պատճառով տարբեր ոլորտներում բարեփոխումներ իրականացնելիս անպայմանորեն պետք է հաշվի առնվեն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կողմից առաջարկվող արտադրանքն ու լուծումները: Այս մասին այսօր՝ հունիսի 8-ին ասել է Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ով «Աշխատանքային նախաձեռնում նախարարի հետ» միջոցառման շրջանակում Բնֆորմացիոն Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միության /ԻՏՁՄ/ հյուրն էր: Բնչպես news.am-ին տեղեկացրին Գյուղատնտեսության նախարարության մամուլի ծառայությունից, աշխատանքային հանդիպմանը ներկա են եղել ԻՏՁՄ հետևյալ անդամ կազմակերպությունները՝ «Մինոփսիս Արմենիա», «Յունիքոմփ», iCON, «Արմինկո», «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն, «Սորսիո», Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ, Օհանյան Վարժարանը, ADC, «Օրանժ Արմենիա»: Հանդիպման ընթացքում նախարարը ներկայացրել է գյուղատնտեսության ոլորտում կատարվող ներկայիս լայնածավալ վերափոխությունները եւ դրանց հետ կապված խնդիրները: Նախարարի կողմից հատուկ շեշտադրվել է գյուղատնտեսության ոլորտում տեխնոլոգիական նորամուծությունների կարեւորությունը: Նրանց փոխանցմամբ՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել համատեղ աշխատանքային խումբ ԻՏՁՄ եւ Գյուղատնտեսության նախարարության միջև, որը կզբաղվի գյուղատնտեսության ոլորտում ՏՏ/ԲՏ լուծումների հետագա կիրառման ծրագրերով: Բացի այդ, պայմանավորվածություն է ձեռք բերվել նաեւ 2 կողմերի հանդիպումները դարձնել պարբերական:

«Ոլորտների ներկայացուցիչների հաջորդ հանդիպումը տեղի կունենա հունիսի 24-25ը «DigiTec» Բիզնես ֆորումի եւ Մայքրոսոֆթ Ինովացիոն ֆորումի շրջանակներում, որոնց մասին գյուղատնտեսության նախարարի աջակցությամբ կտեղեկացվեն գյուղատնտեսության ոլորտում գործող գործարարները եւ, մասնակցելով ֆորումին, կձանթանան տեխնոլոգիական լուծումներին՝ հետագայում դրանք իրենց բիզնեսում կիրառելու նպատակով», - նշել է ԻՏՁՄ գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը:

08.06.2011
news.am

Հանրապետական կուսակցության մի շարք պատգամավորներ՝ Գալուստ Սահակյան, Հերմինե Նաղդայան, Կարեն Ավագյան, Կարինե Աճեմյան, Մկրտիչ Մինասյան և Գրիգոր Մարգարյան՝ օրենսդրական նախաձեռնության կարգով առաջարկ են ներկայացրել փոփոխություններ կատարելու ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքում:

Հատկանշական է, որ սույն առաջարկը ներկայացնողներից միայն Գրիգոր Մարգարյանն ունի գործարար պատգամավորի ճանաչում, ու միայն Հերմինե Նաղդայանն է ներկայացված տնտեսական հարցերի հանձնաժողովում:

Պատգամավորները նշում են, որ ստուգումների մասին օրենքում կան հակաստություններ ու անճշտություններ, որոնք պետք է շտկել:

Մասնավորապես՝ առաջարկվում է սահմանափակել միաժամանակյա ստուգումները տարբեր մարմինների կողմից, եթե տնտեսվարողը առարկում է դրան: Այս լրացման անհրաժեշտությունը պայմանավորվել է նրանով, որ տեսականորեն ստուգող բոլոր (թվով՝ 24) պետական մարմինները կարող են միաժամանակ ստուգումներ կամ ուսումնասիրություններ կատարել ցանկացած տնտեսվարող սուբյեկտի մոտ, ինչը, բնականաբար, կարող է բավականին մեծ խոչնդոտներ հարուցել տվյալ տնտեսվարողի գործունեության համար: Մյուս կողմից, հաշվի է առնվել, որ տնտեսվարող սուբյեկտների համար կարող է նաև ձեռնտու լինել միանգամից բոլոր ստուգումներն անցնելու մեխանիզմը, որի պատճառով էլ առաջարկվող սահմանափակման կիրառումը պայմանավորվել է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի ցանկությամբ:

Նշենք, որ կառավարությունը ևս իր կողմից մի շարք օրենքներ է ներկայացրել խորհրդարան՝ ստուգումները կանոնակարգելու նպատակով:

Ուստի առաջարկվել է պատգամավորներին՝ նշված առաջարկությունները քննարկել կառավարության հայեցակարգային մոտեցումների շրջանակներում:

07.06.2011
armtown.com

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Սույն տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի , և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ: Տեղեկագրի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Օտարերկրյա Ներդրումների և Համագործակցության Ասոցիացիային, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ: